ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 75
հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքը (Հաղթանակ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ
(Նոյեմբերյան համայնքի (Հաղթանակ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 54-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Տավուշ-5 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝

ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի (Հաղթանակ բնակավայրի) Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
11-043-0136-0035 կադաստրային ծածկագրով 1.0296 հա մակերեսով հողամասից՝ 0.52 հա էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքներ, 0.43813 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր, 0.07147 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողատեսք (ըստ անշարժ գույքի վկայականի) և 11-043-0136-0035 կադաստրային ծածկագրով 0.00278 հա մակերեսով էներգետիկայի, տրանսպորտի, կապի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նպատակային նշանակության կոմունալ ենթակառուցվածքներ, 11-043-0136-0002 կադաստրային ծածկագրով 0.00628 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր, 11-043-0476-0001 կադաստրային ծածկագրով 0.00755 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության այլ հողամաս	11-043-0136-0035 կադաստրային ծածկագրով 1.0296 հա մակերեսով հողամասից՝ 0.52 հա մակերեսով, 0.43813 հա մակերես, 0.07147 հա մակերեսով (ըստ անշարժ գույքի վկայականի) և 11-043-0136-0035 կադաստրային ծածկագրով 0.00278 հա մակերեսով, 11-043-0136-0002 կադաստրային ծածկագրով 0.00628 հա մակերեսով, 11-043-0476-0001 կադաստրային ծածկագրով 0.00755 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության գյուղատնտեսական արտադրական օբյեկտների հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3.Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել՝ հաշվի առնելով ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության կողմից տրամադրված «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության պահանջը (կցվում է):

4. Նոյեմբերյան համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Հաղթանակ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի Հաղթանակ բնակավայրի հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ա.Ղուլարյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, « 08 » «ապրիլի» 2022 թ.